ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-844-14.05.2024-ԱՌՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի 33-րդ հոդվածը 4-րդ մասից հետո լրացնել 4.1-ին և 4.2-րդ մասերով.

«4.1. Հավաստագրման յուրաքանչյուր հնգամյա շրջափուլում ավագ և միջին բուժաշխատողները, սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված ՇՄԶ կրեդիտների քանակը լրացնում են շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող իրենց կողմից ընտրված միջոցառումներին և Կառավարության կողմից հաստատված պարտադիր շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառումների ցանկում ներառված բոլոր միջոցառումներին մասնակցելով:

4.2. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառումներին առցանց մասնակցության դեպքում դրանց համար նախատեսված վճարի փոխհատուցման կարգը և դեպքերը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 2. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

3. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Կառավարության կողմից հաստատված պարտադիր շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառումների ցանկում ներառված միջոցառումներին մասնակցության համար շնորհված կրեդիտները համարվում են հաջորդ հնգամյա շրջափուլի համար հաշվարկվող կրեդիտներ:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կ-844-14.05.2024-ԱոՀ-011/0

Երկրորդ ընթերցում

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի 33-րդ հոդվածը 4-րդ մասից հետո լրացնել ~~նոր՝~~ 4.1-ին և 4.2-րդ մասերով.~~՝~~ ~~հետևյալ բովանդակությամբ.~~

«4.1. Հավաստագրման յուրաքանչյուր հնգամյա շրջափուլում ավագ և միջին բուժաշխատողները, սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված ՇՄՋ կրեդիտների քանակը լրացնում են շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող իրենց կողմից ընտրված միջոցառումներին և Կառավարության կողմից հաստատված պարտադիր շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառումների ցանկում ներառված բոլոր միջոցառումներին մասնակցելով:

4.2. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառումներին առցանց մասնակցության դեպքում դրանց համար նախատեսված վճարի փոխհատուցման կարգը և դեպքերը սահմանում է Կառավարությունը:»:

~~***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հոկտեմբերի 1-ից: Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:~~

Հոդված 2. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

3. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Կառավարության կողմից հաստատված պարտադիր շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառումների ցանկում ներառված միջոցառումներին մասնակցության համար շնորհված կրեդիտները համարվում են հաջորդ հնգամյա շրջափուլի համար հաշվարկվող կրեդիտներ:»:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ « ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-844-14.05.2024-ԱռՀ-011/1) ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՆԱՐԵԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածում «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հոկտեմբերի 1-ից:» դրույթն առաջարկվում է փոխարինել «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:» դրույթով:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Լրամշակված նախագծի 2-րդ հոդվածում սահմանվել է, որ սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:	Ընդունվել է:
2.	ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՆԱՐԵԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹ-ՅՈՒՆ	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Կառավարության կողմից հաստատված պարտադիր շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառումների ցանկում ներառված միջոցառումներին մասնակցության կրեդիտները համարվում են հաջորդ հնգամյա	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է, որի արդյունքում նախագծի 2-րդ հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ . **«Հոդված 2. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ** 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: 2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ	Ընդունվել է:

			շրջափուլի համար հաշվարկվող կրեդիտներ:»:	իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում: 3. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Կառավարության կողմից հաստատված պարտադիր շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառումների ցանկում ներառված միջոցառումներին մասնակցության համար շնորհված կրեդիտները համարվում են հաջորդ ինգամյա շրջափուլի համար հաշվարկվող կրեդիտներ:»: Հոդվածի կառուցվածքային փոփոխությունը համապատասխանեցվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին:	
3.	ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով լրացվող 33-րդ հոդվածի 4.1-ին մասում «ցանկում ներառված» բառերից հետո լրացնել «բոլոր» բառը: Լրացման նպատակը քննարկվող դրույթը հստակեցնելն է, քանի որ Կառավարության կողմից սահմանված պարտադիր համարվող դասընթացներից բոլորին մասնակցելը պարտադիր կլինի բուժաշխատողների համար:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է: